Արձանագրություն N 3

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/14» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան 04.05.2020թ.

Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Բաբինյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Անտոնյանը, Տ. Սարգսյանը, Ա. Խառատյանը, Զ. Գեղելյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. **«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/14» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 03.05.2020 թվականին ներկայացված հարցումների վերաբերյալ պարզաբանումներ տրամադրելու վերաբերյալ**

(Կ. Բաբինյան)

<u>Պարզաբանման պահանջի տեքստեր.</u>

Հարգելի Գործընկեր

1. Հաշվի առնելով ամբողջ աշխարհում Կորոնավիրուսի հետ կապված արտակարգ իրավիճակը և օդային բեռնափոխադրումների սահմանափակումները, խնդրում ենք հայտնել հնարավոր է արդյոք մատակարարման ժամկետը երկարաձգել ևս 40 օրացույցային օրով:

Հարգանքով

Բիոքիմիական անալիզատոր

2. Անալիզատորի բնութագրում պահանջվում է. <<Ոչ պակաս քան 3000 թեստի հիշողություն>>: Խնդրում ենք հաստատել, որ նկատի է ունեցվել **թեստի արդյունքների** հիշողությունը, այլ ոչ թե թեստի պրոտոկոլների հիշողությունը: Այստեղ պետք է տարանջատել ծրագրավորվող թեստերի (պրոտոկոլների) քանակը՝ մինչև մի քանի հարյուր հատ, թեստերի արդյունքների քանակից՝ մինչև մի քանի հազար հատ:

Այսպսով խնդրում եմ հաստատել, որ սարքի բնութագրում նկատի եք ունեցել հետևյալ պահանջը. << Ոչ պակաս քան 3000 թեստի արդյունքների հիշողություն>>:

<u>Պարզաբանում տրամադրելու տեքստեր.</u>

1. Հրավերով նախատեսված մատակարաման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ պարզաբանման մասով տեղեկացնում եմ, որ մատակարարման նախընտրելի ժամկետը սահմանվել է հրավերով և փոփոխման ենթակա չէ:
2. 3-րդ չափաբաժնում նախատեսված բիոքիմիկանա անալիզատորի վերաբերյալ կատարված հարցմանը վերաբերյալ տեղեկացնում եմ, որ «Ոչ պակաս քան 3000 թեստի հիշողություն» չափանիշը վերաբեվում է հիվանդների արդյունքների հիշողությանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահող՝		Կ. Բաբինյան
Անդամներ՝		Գ. Անտոնյան
		Տ. Սարգսյան
		Ա. Խառատյան
		Զ. Գեդեյյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան